

Արձանագրություն №12/2018-2019

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2019թ. հունիսի 27-ին տեղի ունեցած թիվ 12 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 69-ը (վաթսունինը):
Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը:

ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում կայացավ նիստի օրակարգի առաջին հարցի՝ ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված նամականիշի մարման հանդիսավոր արարողությունը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ա. Հարությունյանի, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հ. Արշակյանի, հյուրերի և գիտխորհրդի անդամների մասնակցությամբ: Նամականիշի մարման արարողությունից հետո ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոս, արվեստաբան ու գծանկարիչ Լևոն Լաճիկյանին պարգևատրեց ԵՊՀ ոսկե մեդալով՝ նամականիշի էսքիզը հեղինակելու համար:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված նամականիշի մարման արարողություն:
2. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն.Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
3. Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն. Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
4. ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգում փոփոխություններ կատարելու մասին (զեկ.՝ ռեկտորի պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյան):
5. ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգում փոփոխություններ կատարելու մասին (զեկ.՝ պրոռեկտոր Մ. Ա. Սողոմոնյան):

Ընթացիկ հարցեր

6.1. Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոնի ուսումնական լաբորատորիայի ստեղծման մասին:

6.2. Ս. Գասպարյանի, Շ. Պարոնյանի և Գ. Մուրադյանի «The Use and Abuse of Language in the Legal Domain» մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին:

6.3. Արաբագիտության ամբիոնի արտաքին համատեղությամբ դասախոս, պ.գ.դ. Ռուբեն Կարապետյանի՝ «Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն» աշխատանքի 2-րդ լրամշակված տարբերակը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու համար ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

6.4. Ժ. Մանուկյանի «Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում 1988-1994թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)» աշխատությունը հրատարակության երաշխավորելու մասին:

6.5. Ժ. Մանուկյանի «Տարեգրություն Երևանի պետական համալսարանի» վերառառությամբ աշխատությունը հրատարակության երաշխավորելու մասին:

Գի տիտ ր հ ր դ ի ան դ ամ ն ե ր ի կ ո դ մ ի ց օ ր ակ ար գ ի հ ամ ար այ լ հ ար ց չ առ աջ ար կ վ ե ց , և մ աս ն ակ ի ց ն ե ր ի ք աց ք վ ե ար կ ո լ թ յ ամ ք ը ն դ ո լ ն վ ե ց ն ի ս տի օ ր ակ ար գ ը :

1.-2. Լսեցին –

1. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում:
2. Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում:

Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյանը ներկայացրեցին պրոֆեսորի, դոցենտի կոչման և ամբիոնների վարիչների հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնորդն էր.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Բալաբեկյան Անահիտ Ռաֆիկի	Միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

Ը/Ը	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՅՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Գրիգորյան Սարգիս Մարտինի	Արաբագիտության ամբիոնի ասիստենտ
2.	Կոստիկյան Քրիստինե Պետրոսի	Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի ասիստենտ
3.	Առաքելյան Զարուհի Սամվելի	Ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասիստենտ
4.	Մադոյան Գոհար Գագիկի	Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ
5.	Հայրապետյան Նարինե Կոլյայի	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ
6.	Կարապետյան Հասմիկ Մաենլեստի	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ

Ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդներն էին .

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՅՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Մարգարյան Հայրապետ Գևորգի	Հայաստանի հարակից երկրների պատմության ամբ. վարիչի
2.	Հովհաննիսյան Նելլի Ալեքսանդրի	Էկոլոգիայի և բնության պահպ. ամբ. վարիչի
3.	Ղամբարյան Կարեն Մարտինի	Կիսահաղորդիչ. ֆիզ. և միկրոէլեկ. ամբ. վարիչի
4.	Վարդանյան Արշակ Լյուդվիգի	Պինդ մարմնի ֆիզիկայի ամբ. վարիչի
5.	Բալաբեկյան Անահիտ Ռաֆիկի	Միջուկային ֆիզիկայի ամբ. վարիչի
6.	Մարգարյան Շիրազ Ալեքսանդրի	Ֆիզիկ. և կոլոիդ քիմիայի ամբ. վարիչի
7.	Ապրեայան Մարգարիտ Հրանտի	Անգլերենի թիվ 1 ամբ. վարիչի
8.	Գասպարյան Սեդա Քերոբի	Անգլիական բանասիրության ամբ. վարիչի
9.	Գրիգորյան Վահագն Վարազդատի	Սոցիալ-տնտ. աշխարհ. ամբ. վարիչի
10.	Խաչատրյան Շահեն Վոլոդյայի	Ռեգիոնալ երկր. և օգտ. հանածոն. հետախուզ. ամբ. վարիչի
11.	Միմոնյան Հայարփի Մանթաշի	Ֆարմաքիմիայի և ֆարմակագնոգիայի ամբ. վարիչի
12.	Մարկոսյան Աշոտ Խաչատուրի	Նորարարության տնտեսագիտ. ամբ. վարիչի
13.	Հարությունյան Էդվարդ Արզումանի	Սոցիալ. փիլ. և բարոյագիտ. ամբ. վարիչի
14.	Գրիգորյան Արսեն Թորգոմի	Ֆիզ. աշխարհ. և ջրաօդ. ամբ. վարիչի
15.	Հայրապետյան Հրաչիկ Մերգոյի	Մաթ. անալիզի և ֆունկցիաների տես. ամբ. վարիչի
16.	Հարությունյան Ռուբեն Միքայելի	Գենետիկայի և բջջաբանության ամբ. վարիչի

17.	Կարապետյան Աննա Ֆելիքսի	Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբ. վարիչի
18.	Գաբուզյան Արա Հարությունի	Քրեական իրավունքի ամբ. վարիչի

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Հակոբյան Ռաֆիկ (նախագահ)
2. Աբրահամյան Ռուբեն
3. Ալեքսանյան Մանե

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 69 անդամներից 69-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ռ. Հակոբյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Բալաբեկյան Անահիտ Ռաֆիկի	62	1	6

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Գրիգորյան Սարգիս Մարտինի	68	1	0
2.	Կոստիկյան Քրիստինե Պետրոսի	68	1	0
3.	Առաքելյան Զարուհի Սամվելի	68	1	0
4.	Մադոյան Գոհար Գագիկի	68	0	1
5.	Հայրապետյան Նարինե Կոլյայի	68	1	0
6.	Կարապետյան Հասմիկ Մաենլեստի	68	1	0

Ամբիոնի վարիչի պաշտոնի համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Մարգարյան Հայրապետ Գևորգի	67	2	0
2.	Հովհաննիսյան Նելլի Ալեքսանդրի	67	2	0
3.	Ղամբարյան Կարեն Մարտինի	69	0	0

4.	Վարդանյան Արշակ Լյուդվիգի	67	2	0
5.	Բալաբեկյան Անահիտ Ռաֆիկի	68	1	0
6.	Մարգարյան Շիրազ Ալեքսանդրի	66	3	0
7.	Ապրեայան Մարգարիտ Հրանտի	66	3	0
8.	Գասպարյան Սեդա Քերոբի	65	4	0
9.	Գրիգորյան Վահագն Վարազդատի	59	9	1
10.	Խաչատրյան Շահեն Վոլոդյայի	68	1	0
11.	Միմոնյան Հայարիի Մանթաշի	68	1	0
12.	Մարկոսյան Աշոտ Խաչատուրի	62	7	0
13.	Հարությունյան Էդվարդ Արզումանի	66	3	0
14.	Գրիգորյան Արսեն Թորգոմի	61	8	0
15.	Հայրապետյան Հրաչիկ Մերգոյի	65	4	0
16.	Հարությունյան Ռուբեն Միքայելի	60	9	0
17.	Կարապետյան Աննա Ֆելիքսի	69	0	0
18.	Գաբուզյան Արա Հարությունի	68	1	0

Որոշեցին –

1. Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:
2. Հաստատել վերոնշյալ պրոֆեսորների և դոցենտների՝ ամբիոնի վարիչ ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված ամբիոնի վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3.Լսեցին – ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգում փոփոխություններ կատարելու մասին հարցը: Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը խոսելով կարգում կատարված փոփոխությունների մասին՝ նշեց, որ դրանք կապված են հետագա քաղաքականության հետ, քանի որ առկա է ժամանակի պահանջներին հարմարվելու խնդիր, ինչպես օրինակ՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսանողների ինքնուրույն աշխատանքի մասնաբաժնի մեծացման, լսարանային ծանրաբեռնվածության թեթևացման և այլն: Կարգում կատարված փոփոխություններից մեկը վերաբերում է ուսուցման կառավարման համակարգի կիրառմամբ դասախոսությունների անցկացմանը՝ նախկինում դասախոսությունները համացանցում ներբեռնելու փոխարեն: Ավելացվել է 1 կրեդիտին համարժեք նյութի արժեքը՝ 30000 դրամից հասնելով 50000 դրամի, ինչը հետագայում ևս պետք է ավելացվի: Գ. Գևորգյանը նշեց, որ այս տարի կներդրվի Moodle համակարգով դասախոսությունների կիրառումը, հաջորդ տարի՝ այդ նույն համակարգով գործնական աշխատանքների կատարումը և 3 տարի անց արդեն ամբողջական անցում կկատարվի Moodle համակարգով ուսուցմանը: Այն հնարավորություն կտա առավել արդյունավետ դարձնել համացանցի հնարավորությունները և դասախոս-ուսանող կապը:

Արտահայտվեցին - Կարգում կատարված փոփոխություններից մեկի վերաբերյալ, ըստ որի՝ պաշտպանությունից առաջ վերջին երկու տարում ԵՊՀ-ում առնվազն 20 ամիս աշխատած

հայցորդի ատենախոսության ղեկավարման համար որպես լրավճար 150000 դրամ է վճարվելու, դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Արա Ալեքսանյանը առաջարկեց ի լրումն այդ փոփոխության՝ հաշվի առնել և ամրագրել նաև պաշտպանությունից հետո համալսարանում մնացող և աշխատող հայցորդների ղեկավարման հանգամանքը, ինչն առավել կարևոր է: Ի պատասխան՝ Գ.Գևորգյանը նշեց, որ այդ հարցը ևս կարևոր է և առաջարկեց այդ նկատառումը հետագայում ձևակերպել և ներկայացնել հոդվածի ձևով՝ կարգում նախատեսվող փոփոխությունների ժամանակ հաշվի առնելու համար: Սոցիոլոգիայի ֆակուլտետի ղեկան Արթուր Մկրտիչյանը, ողջունելով հեռահար ուսուցման տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ իրականացվող քայլերը, նշեց, որ մասնավորապես Moodle համակարգը համարվում է արդեն հնացած տեխնոլոգիա և առաջարկեց մտածել առավել նոր ու արդիական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ:

Որոշեցին – Հաստատել ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգում փոփոխությունները:

4.Լսեցին – ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգում փոփոխություններ կատարելու մասին: Պրոռեկտոր Մ. Սողոմոնյանը տեղեկացրեց, որ կրթական ծրագրերի մոնիթորինգն ու վերանայումը 2014թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի շրջանակում ԵՊՀ ստանձնած պարտավորությունների շարքում է գտնվում և ըստ ամենայնի հոկտեմբերից կսկսվի մոնիթորինգի իրականացումը, որը կվերաբերի բոլոր մագիստրոսական ծրագրերին:

Որոշեցին – Հաստատել ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգում փոփոխությունները:

5.1. Լսեցին – ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոնի ուսումնական լաբորատորիայի ստեղծման մասին: Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ղեկան Խ. Ներկարարյանը հայտնեց, որ ուսումնական լաբորատորիայի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է ամբիոնում լաբորատոր, գործնական աշխատանքների ծավալի ավելացմամբ: Նա նաև նշեց, որ լաբորատորիայի ստեղծմամբ պայմանավորված նոր հաստիքների կարիք չի լինելու, նոր հաստիքներ չեն պահանջվելու:

Որոշեցին – ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոնի ուսումնական լաբորատորիայի ստեղծման վերաբերյալ առաջարկություն ներկայացնել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին:

5.2. Լսեցին – «The Use and Abuse of Language in the Legal Domain» վերնագրով կոլեկտիվ մենագրությունը (հեղ.՝ ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Ս. Գասպարյան, միջմշակութային հաղորդակցության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Շ. Պարոնյան, անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ. Գ. Մուրադյան) հրատարակության երաշխավորելու մասին:

Որոշեցին – «The Use and Abuse of Language in the Legal Domain» վերնագրով կոլեկտիվ մենագրությունը (հեղ.՝ ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Ս. Գասպարյան, միջմշակութային հաղորդակցության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Շ. Պարոնյան, անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ. Գ. Մուրադյան) երաշխավորել հրատարակության:

5.3. Լսեցին – «Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն» աշխատանքի (հեղ. Ռուբեն Կարապետյան) 2-րդ լրամշակված տարբերակը որպես բուհական դասագիրք

ճանաչելու հարցում ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին: Աշխատանքը հրատարակության է երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի, Հայ-ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ընդհանուր պատմության բաժնի կողմից: Առկա է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանի զեկուցագիրը՝ աշխատանքը գիտական խորհրդում քննարկելու և ԿԳՄՄՆ-ին միջնորդելու վերաբերյալ:

Որոշեցին - «Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն» աշխատանքի (հեղ. Ռուբեն Կարապետյան) 2-րդ լրամշակված տարբերակը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում միջնորդել ԿԳՄՄՆ-ին:

5.4.Լսեցին – «Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում 1988-1994 թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու) աշխատությունը (կազմ.՝ Ժ. Մանուկյան) հրատարակության երաշխավորելու մասին:

Որոշեցին - «Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում 1988-1994 թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու) աշխատությունը (կազմ.՝ Ժ. Մանուկյան) երաշխավորել հրատարակության:

5.5.Լսեցին – «Տարեգրություն Երևանի պետական համալսարանի» վերտառությամբ աշխատությունը (կազմ.՝ Ժ. Մանուկյան) հրատարակության երաշխավորելու մասին:

Որոշեցին - «Տարեգրություն Երևանի պետական համալսարանի» վերտառությամբ աշխատությունը (կազմ.՝ Ժ. Մանուկյան) երաշխավորել հրատարակության:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

04.07.2019թ.